յետոյ (պակասորդ) . . .[1] ։ Քայսեցիք նոցա հետ միասին յուզեցան եւ ապստամբեցան Խալիդի դէմ, որոնց հետ էր նաեւ Ալի ի․ Եահեայ Հայաստանցին․ Խալիդ զերեց նորան եւ այլ զերեալների հետ հանդերձ ուղարկեց Մամունի մօտ։

Մամուն գրեց Աբդուլլահ ի․ Մասադ Ասդիին կառավարիչ Խալիդի փոխարէն, որ միայն կարճ միջոց մնաց այստեղ մինչեւ իւր մահը։ Ամիրապետը կառավարեցրեց նորա որդի Ալիին երկրի վերայ․ սակայն վերջինս յուզուած դրութեան մէջ լինելով Մամուն նշանակեց Հասան ի․ Ալի Բադղիզիսին, որ Մամունի կը կոչուէր։ Երբ նա իւր պաշտօնատեղը եկաւ, երկիրը տակաւին խռովութեան մէջ էր․ նա պատերազմեցաւ[2] . . . ամրոցի բնակիչների հետ եւ տիրեց նորան։ Դուին վերադառնալով նա մնաց այստեղ եւ գրեց Տփղիսեցի Իսահակ ի․ Իսմայէլ ի․ Շուայբին՝ (իրան) տուրք[3] ուղարկել, բայց որովհետեւ Իսահակ այս պահանջը մերժեց եւ նորա պատգամին չընդունեց, նա ինքն արշաւեց Տփղիսի վերայ։ Երբ նա քաղաքին մօտեցաւ, Իսահակ (նորան) ընդառաջ ելաւ եւ նորան տուրք տուեց։ Հասան ապա վերադարձաւ այնտեղից։

222 Թ․ Օշին գրեց Հայոց եւ Ատրպատականի իշխաններին՝ որոնել Բաբեկին, խոստանալով 1,000.000 դրամ[4] նորան, ով նորան (իւր մօտ) բերէ։ Բաբեկ գնաց իշխաններից մէկի մօտ, որ Սահլ ի․ Սմբատ կը կոչուէր․ վերջինս ձերբակալեց նորան եւ տեղեկացրեց Օշինին այս բանի մասին։

---

1 Հետեւեալի իմաստին համաձայն կցելու է «Նոքա խզեցին խաղաղութիւնը»։

2 Անունս առանց կէտադրութեան լինելով դժարին է նորա նոյն իսկ ենթադրելի ընթերցումն։

3 Մ—ւ կը բաղկանար Բ—ն—ն․ իսկ Խ—րՀ՝ հակառակն դրամական տուրքից։

4 20–25 արծաթ․ դրամ = մի ոսկէ դենար։